

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԿԸ ՊԱՐԳԵԲԱՏՐՈՒԻ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ

Հոգեկան անհուն հրճուանքով կը հաղորդենք թեմիս Հոգեւոր Հովիւներուն, Ծխական Խորհուրդներուն, Տիկնանց Միութեան Մասնաճիւղերուն, թեմական Պատգամաւորներուն, յարակից կազմակերպութիւններուն եւ մեր համայն հաւատացեալ ժողովուրդին, թէ Միջազգային Հիմնարկութիւնը Օրթոտոքս Քրիստոնեայ Եկեղեցիներու Միութեան, Մոսկուայի մէջ ձեռամբ Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Նորին Արքութիւն Քիրիլ Պատրիարքի, որ Ատենապետն է վերոյիշեալ հիմնարկութեան, այս տարուան «Օրթոտոքս ժողովուրդներու Միութեան Մրցանակ»ով Յունուար 21ին պարգեւատրած է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նոյն մրցանակին արժանացած են նաեւ Ռուսաստանի Նախագահ՝ Նորին Վսեմութիւն Տիմիթրի Մետվոլտէվ եւ շարժապատկեր պատրաստող Էմիր Գուստուրսիա: Առ ի գիտութիւն, այս ծրագրիը հաստատուած էր 10 տարի առաջ Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Երջանկայիշատակ Տ. Ալէքսի Բ. Պատրիարքի կողմէ:

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տրտէրեան Վեհափառ Հայրապետին գրած իր շնորհաւորական նամակին մէջ կ'ըսէ. *«Բացառիկ այս առիթով, անձամբ եւ յանուն թեմական Խորհուրդի, Հոգեւորականաց Դատուն եւ համայն հաւատացեալներուն, մեր սրտագին շնորհաւորութիւնները, որդիական սէրն ու հաւատարմութիւնը կը յայտնենք Ձերդ Արքութեան՝ մաղթելով քաջառողջութիւն եւ արեւշատ տարիներ»:*